

զոտութիւնը մեծան առաջընթաց քայլին առջեւ։

Էն առաջ, կըսէր ատենաբանը, պէտք է լաւ սերտիւ վարդապետութիւնը որուն կը հետեւինք, և յետոյ պէտք է, զիտակցական մեծ հաւատքով մը սերտ կապակցութիւն ունենալ ամեն երկրի ընկերակցականներու հետ։ Ան առան է միայն որ մեր ներդաշնակաւորութեամբ միութեան առջեւ, որ ունի մէկ իտէալ, մէկ վարդապետութիւն, ինքնին պիտի իյնան լոյրը հակազդեցութեան մարդերը որոնք որպէս թէ՛ ընկերակցութեան տարբեր մէկ ճիւղաւորութիւն վարդապետներն են թոյլը հըսկայ ու կազմակերպութեամբ ուժերուն առջեւ, որոնք մեզի կը հարուածեն, կըսէր, պէտք է վերջապէս համայնական զօրութիւն մըն ալ մենք գոյացնենք, զաղափարին ամուր, ժայռէ կռուանին վրայ։

Եթէ, հոս մէջ բերի նշանաւոր ընկերակցականի մը ճառին զրեթէ ամբողջ հոգին, պատճառը սա է որ, կուզէի բազմաթիւական ընդունութիւն մը ընել ընկերական հարցին և մեր արդի ձգտումին, ազգաբնակչութեան միջեւ, և յոյս տալ, հոս ալ, բուն թշնամին, էն ստորաբարձ տարրը, որ ամենէն հայրենասէրն է որպէս թէ։ Չէ՞ մի որ մեր մէջ ալ, էն աղետաբերները անոնք եղան. բոլոր կեղծաւորները, ազգայնական, շահախնդիրները որոնք, կարեկցութեան ժպիտով մը (), հայ ժողովուրդին խոշոր, արիւնաթաթաւ մարմինը կը փափայեն, անուշ, կեղծաւոր բառեր մընկելով անոր ականջէն, անոր քունին աղւոր օրօր կը կարգան, անոր անզգայ վիճակին մէջ խմելու համար անոր արիւնը, անոր կեանքը։ Տղրուկներն են ատոնք, զէպքերուն վրայ ձեռնադրելով, որոնք բաւական բարոյական կորով չունին կեանքի կռիւը մղելու, և ու

րոնք, հացին համար, կեղծիքին կը դիմեն։ Եւ հայ ժողովուրդը, քնացած ու անզգայ, կանէնայ հեղաշեւտէ կորուստին մթութեան մէջ։ Քիչ չառ ըննադատ միտք մը պիտի հասկնայ բոլոր այս եզրակացութիւնները, որոնք հայ ժամանակակից պատմութենէն կը բղխին։

Եւ սակայն արթննա՞նք, ճանչնա՞նք մենք մեզի. մինչեւ ե՞րբ, մինչեւ ե՞րբ չի պիտի կրնանք զանազանել վտանգաւորը օգտակարէն, մինչեւ ե՞րբ թո՛ղ պիտի տանք, որպէս զի ներքին ցնցիր մեր արիւնը խմեն։

Ճանչնա՞նք մենք մեզի. ջանանք գոնէ, ինքզինքը հասկցող սերունդ մը պատրաստել։ Անկէք ետքն է որ, միանուագ զաղափարակցութեան մը դաշնակցութիւնը պիտի կազմուի. բարձր, կազմակերպութեամբ, ամուր միութիւն մը, որուն հասկացողութեան և խորունկ արհամարհանքին առջեւ, ժողովուրդին ըսածին պէս, ինքնին պիտի իյնան հակազդեցութեան մարդերը՝ իրենց խայտառակ ազդեցութեանը մէջ։

ԱՅՈՏ ԱՇՈՏԵԱՆ

ՏՕՊՐԻՉ

Այս քաղաքէն ստացանք 12 ստորագրութեամբ երկրորդ նամակ մը, որ կուգայ հերքել ինչ որ զրաժ էին մեզ ուրիշ եօթ ազգայիններ Շ. անուն երիտասարդին մասին։

Մինչ առաջին նամակը կը ներկայացնէր այս անձը իբր շահագէտ խառնակիչ մը ազգ. գործերու, այս երկրորդ նամակը կը յայտարարէ թէ այն, ընդհակառակը, միշտ ջանացած է օգտակար ըլլալ հանրութեան իր կարողութեան չափով և թէ Տօպրիչի հայութեան մեծամասնութիւնը համոզուած է որ Շ. ի հակառակորդ

ներուն դիմումն է միայն եռանդոտ և անմեղ երիտասարդի մը անունը աղարտել։

Որովհետեւ կը տեսնենք որ երկու կողմին ըսելիքներուն վերջը առնել շատ դժուար պիտի ըլլայ և թեր ու դէմ գրութիւններէն, որոնց օտար չին, ինչպէս կերելի, անձնական նկատումներ, չպիտի կրնանք ճշմարտութեան վերահաս ըլլալ, կը փակենք մեր սրէնակները առանկ ապարդիւն վեճի մը, խնդրելով Շ. ի բարեկամներէն և հակառակորդներէն ներկայութիւն չի կրել մեզ զրկելու իրենց հանրագիրներն և հերքումները։

ՀԱԿԱՀԵՐՔՈՒՄ

Սիլիստրէէն Տ. Սէթ հակահերքում մը զրաժ է տղին Տ. Թ. վակիմ քահանային հերքումին դէմ, որ հրատարակուած է մեր 38րդ. թիւին մէջ։

Հակահերքումը շատ երկար ըլլալով, ստիպուած ենք անոր զըլխաւոր կէտերը միայն առաջ բերել։

1. Ղաջի գիշերուան դամբանականի տէր հօր կողմէն արգիւնելուն մասին Տ. Սէթ կըսէ.

«Իբր թէ ինձ դամբանական չի խօսեցնելուն շարժառիժը վարդապետի օրը ըրած պոռնիքաւորութիւնն է եղեր, եւ ինք չէ ուղիւ փորձեալը կրկին փորձելու անմտութիւնը դործել։ Սքանչելի փաստ։ Եթէ այդպէս էր, եթէ իրօք ատենախօսութիւնս այդքան անախորժ ազդեցութիւն մը ըրած էր, ինչո՞ւ Պատ. թաղ. խորհուրդը թողաւորեց որ Աւագ հինգշաբթի գիշերուան դամբանականը խօսիմ, և ցորեկունէն ալ իր որոշումը հաղորդեց քահանային։ Ինչո՞ւ տէր հայրը կը ծածկէ այս պարագան եւ չուզէր նաեւ յիշել որ նոյն երեկոյ խոսն

բաղմութիւն մը եկած էր եկեղեցին, մասնաւորապէս դամբանականի ունկնդրելու փափագով։ Եթէ իր ըսածին պէս է, ինչո՞ւ ինք չի կարգաց խաչի ձառք. տօնացոյցին մէջ չի կարարգեօք։ Ասալ մէկզի։ Եթէ տէր հայրը, ինչպէս ինք ալ կըսէ, գիտէր որ եկեղեցին մէջ դամբանական կը խօսուի, ինչո՞ւ 1/2 տարի առաջ արգելք եղաւ Պր. Ս. Ա. ին սր յատկապէս հրաւիրուած էր խօսիլ վաղամեռիկ Թօբսագալեանի վրայ և իր արգիւքին իբր հիմնական պատճառ առարկից թէ եկեղեցին առանկ լաւ չընդունիր։

Այս ալ սուտ է։

2. Ոսկրուայի համար քահանային դրամ առնելուն նամակագիրը վկայ ցոյց կուտայ բոլոր Սիլիստրէցիները և մասնաւորապէս վարժարանին սաները։

3. Խաչահանգիստը, կըսէ Տ. Սէթ, երկու պարագայի մէջ կըրնայ ըլլալ. մէկը տաղաւարներուն և միւսը՝ երբ յատկապէս կը խնդրուի։ Գ. Պօլսոյ Մայր եկեղեցիին օրինակը փաստ չէ. այնտեղի սովորութիւնն ալ Գումգաբուի քահանաներուն արծաթաւոր ոգիին ծնունդն է։ Ո՛ւր զրուած է թէ խաչահանգիստը աւելի ստէպ կատարուելու է։

4. Ընդգրկման օրը չուզեր արգիւք քահանան տօնելու. առթիւ շնորհաւորութեան երթալէ, ալ ըսել կուզէ որ այդ պատրուակով ամէն մարդէ, մանաւանդ անկարողներէ զրամ չի շորթուի եւ եթէ կարելի է, Տէր հայրը ձգէ որ այդ առթիւն օգտուին միայն զաւրոյցին և ընթերցարանին գանձանակները։

5. Պանդուխտ քահանան երկու պատարագ ըրած է. բայց ե՞րբ։ Մին Ծաղկազարդէն առաջ, իսկ երկրորդը Չատիկէն ետքը, երբ հոս վերադարձաւ, մինչդեռ Տ.

ՍԱՐԿԱՒԱԳ

(8)

Ընթերցողներին ճաշիկ մը տալու համար առաջ ենք բերում այս սեղ ալի կոհնապարից մէկը որը ուղղուած է երեւակայական «Բուլղարիայի առժամանակեայ կառավարութեան» կողմից։ «Եղբայրներ, ներկայ ժամանակում ամէն մի բուլղար ձգտում է ազատուիլ հազարացիների գերութեան լծի տակից։ Այդ պատճառով եւ զուգ, եթէ ձեզ բուլղար եւ ազնիւ մարդ էք համարում, պէտք է բոլոր սրտով եւ բոլոր հոգով անձնատուր լինէք ազգային գործին եւ ցոյց տաք որ դուք յիշաւի Բուլղարիայի արժանաւոր եւ ազատասէր որդիներն էք։ Կրկնում ենք, եթէ դուք իսկապէս հայրենասէր, քրքրիտանկայ եւ ձեր պատիւը ճանաչող մարդիկ էք, դուք պէտք է շտապէք կատարել մեր եւ բոլոր Բուլղարիայի հետեւեալ ցանկութիւնները. իսկ եթէ չէք կատարի՝ իմացած լինէք որ բոլոր ազնիւ եւ իրենց ազգը սիրող բուլղարները պէտք է անիծեն ձեզ եւ ձեր գործերի համեմատ պէտք է հաշիւ տեսնեն ձեզ հետ։ Ով որ չէ ազու՛մ

ազատ լինել, նա բուլղար չէ, նա մարդ չէ։... Ձեր առաջը երկու ճանապարհ կայ. մէկը ազատութեան ճանապարհն է, որով առաջարկում ենք զնալ մեզ հետ եւ ժողովրդի հետ միասին, իսկ միւսը ստրկութեան ճանապարհն է, ուր դուք պէտք է երեսներդ վերայ սողաք ամեն մի արիւնարբու, գարշելի թուրքի առաջ։... Շտապեցէ՛ք ուրեմն զրեւ ձեր անունները պատմութեան էջերում ոսկի կամ թէ սեւ տառերով. յայտնեցէ՛ք շուտով—որն էք ընտրում՝ սեւ ստրկութիւնը, թէ ոսկեայ ազատութիւնը։

Մեր ցանկացածը ձեզ յայտնի է. մենք ցանկանում ենք ազատուիլ թիւրքի գերութիւնից եւ ազատ մարդ դառնալ։ Պատրաստեցէ՛ք ուրեմն դուք էլ մեզ հետ միասին պատերազմելու եւ սպասեցէ՛ք այն օրհասական ժամին, որը շատ շուտով պէտք է դարկէ։... Բայց այդ մեծ գործի յաջողութեան համար հարկաւոր է մեզ երկու բան՝ մարդիկ եւ փող, Մարդիկ մենք ունենք, բայց փող չունենք, սակայն Աստուծոյ ողորմութեամբ շուտով փող էլ կը գտնենք։... Ազգային կեդրոնական յանձնաժողովը յանձնել է մեզ ա-

զատութեան գործի համար հարկաւոր եղած նիւթական միջոցները հաւաքել եւ մենք վստահ ենք որ կը հաւաքենք։... Մենք այդ միջոցները կ'ստանանք նոյն իսկ ժողովրդից։... Առաջարկում ենք ձեզ եւս մասնակցել այդ ժողովարարութեան. ո՛վ ինչ որ կարող է եւ ինչքան որ կարող է։... Ձեզանից ամեն մէկը իր նուիրատուութեան համար կ'ստանայ ազատութեան ի զիմաց Բուլղարիայի առժամանակեայ կառավարութեան, որը իւր ստացած գումարներին համար մանրամասն հաշիւ կուտայ ազգին, այսինքն բուլղարական ազգային յանձնաժողովին. իսկ այդ վերջինի գործողութիւնները ժամանակով կը վերստուգէ ապագայ անկախ բուլղարական պետութիւնը։... Բուլղարիայի առժամանակեայ կառավարութիւնը պէտք է մանրամասնօրէն նըշանակէ—թէ՛ ո՛վ ինչքան է տուել, թէ՛ ինչ րանի համար է գործադրուած հաւաքուած գումարը, թէ՛ ովքեր են կրուի մէջ նահատակուելու եւ ինչպէս են նահատակուել, եւ այլն։... Երանի՛ այն հայրենասէրներին, որոնք կը մասնակցեն հայրենիքի ազատութեան սրբազան պատերազմին. նոցա

անունները պէտք է յաւիտեանս յաւիտենից փառաւորուին. իսկ մասնիչները, ժողովրդի հարստաբարիչները, վախկոտները եւ անտարբերները պէտք է դատապարտուին յաւիտենական անէծքի։... Ո՛վ որ իրեն ճշմարիտ բուլղար է համարում եւ չի կամենում մընալ թիւրքերի ստրուկ, նա պէտք է այժմ իսկ զանէ ամեն բան. որպէս զի յետոյ հարկաւորապէս աւելի վարձատրուած լինի։... Եվ ճանաչենք մեր կայքը, զբաւ զնենք մեր կանանց եւ երեխաներին եւ փրկենք հայրենիքը»։

«Նայեցէ՛ք, չի լինի թէ յետոյ ասէ՛ք եւ կամենում էի օգնել, բայց չի գիտէի թէ ում պէտք է դիմած եւ կամ ինչպէս պէտք է տեղը հասցրած։ Մենք ամէն տեղ ունենք հաւատարիմ մարդիկ. նոցա միջոցով մենք ծանօթ ենք ձեր ամէն մէկի հետ. գիտենք ձեր ամէն մէկի կարողութեան չափը եւ իւրաքանչիւրիդ դաղափարը։ Ահա այդ հաւատարիմ մարդիկը կը ներկայանան ձեզ։... Բայց կարելի է կ'ասէք—այժմ մեր մօտ փող չ'կայ։ Պարտք վերցրէ՛ք, ծախեցէ՛ք ձեր ունեցածը. տնեցի գրաւ զրէ՛ք, վճառեցէ՛ք ձեր բաժինը եւ ըս-

Թովակիմի հարցուածը սա էր թէ ինչո՞ւ համար իր պանդուխտ կարգակիցը Աւագ շարժումն մէջ բարեփոխեցաւ ասկէ հետեանալ արտասուալից աչօք :

6. Վարի երկուողը կարգացէք (*) :

7. Հիւանդութեան պատճառաւ եկեղեցի չեկող բահանային ոչ ոք կրնայ բան մը ըսել : Բայց, կը հարցնէ Տ. Սէթ, ինչո՞ւ տէր Հայրը եկեղեցի չի բանար այն օրերը երբ տունը կամ շուկան հանգիստ նստած կըլլայ Յետոյ, ինչո՞ւ կիրակի օրեր ժամերգութիւնը «Օրհնեսցուք»էն կը սկսի : Տէր հայրը չգիտե՞ր որ առանց «Տէր զի բաղում»ի, «Առաւօտ լուսոյի» եւ «Կանոնագիր»ի պատարագ չըլլար վկայ՝ Դասպար պատուելին եւ ժամկոչը :

Նամակագիրը կուեցնէ թէ Տ. Թովակիմ քահանայ բնաւ չը խորհրդարարքներէ որոնք անվայել են սքեմին՝ օրինակ, պահք օրեր ձեռքը միս առած տանիլ, պատարագի ամէնէն խորհրդաւոր պահուն «Ժօ՛ տղաք, պնակս պըտըտցուցէք» պօռալ եւ սրճարաններու մէջ անպատշաճ խօսքեր ընել եւն :

Տ. Սէթի հետեւեալ տողերը, որոնք իր ծանօթ ատենախօսութեան կը վերաբերին, հարկ կը տեսնենք գրութեան մէջէն անշաւտելով, անփոփոխ դնել այս տող :

«Թէեւ գրութեանս սահմանէն դուրս է, բայց ինչպէս ուրիշ անգամներ, նոյնպէս եւ այս անգամ վարդապետներ օրը եղիշէի անաչառ ըլլալուն կամ չըլլալուն մասին յայտնած կարծիքս, պատմութենէ բնաւ չհասկցող իմաստականներէ ըստ

(*) Ինչպէս հոս շատերուն, նոյնպէս հոս պատմական կը վրայեմ քե եւ եփած եւ քարած եւ սուրճը եւ Տ. Հայրը գաղտնիք մը, ճիշդ խորանիս դիմաց, նստած խնամեմ եւ նոյն իսկ մի քանի հոգիի առջեւ :

ՆԵՍԱՆ ԳԱՆՈՒՍԵԱՆ

տալէք ապահովագիր, որը ձեր միակ փրկութիւնը պէտք է լինի... Երբոր մեր քաղերը կը մանեն զրօշակի սակ - այդ շատ չուսով կը լինի - այն ժամանակ վայ նորանց, որոնց մօտ չի գտնուիր յիշեալ ապահովագիրը, ո՞վ որ չի մասնակցել մեր ազգային շարժմանը՝ այնպիսին պէտք է համարուի մատնիչ եւ ազգի թշնամի եւ իւր այդ մեղքի համար ինքը պէտք է ենթարկուի պատժի, իսկ նորա սերունդը մշտնջենաւոր նախատինքնի... Մէկ էլ ենք ասում, եթէ յօժարութեամբ տաք, ինչ որ պարտական էք տալու, այն ժամանակ ձեր եւ ձեր ընտանիքի կեանքը ապահովուած կը լինի... իսկ եթէ մեզ հետ վարուէ՛ք ոչ իրենեւ բարեկամ կամ, ուրիշ խօսքով, եթէ մեր այդ թղթերը ցոյց տաք տաճիկ կառավարութեան, եթէ մատնէք մեր կողմից ձեզ մօտ ուղարկուած մարդիկներին, եթէ հրապարակ հանգէք մեր այդ պահանջները, եթէ այդ ամենի մասին խօսէք ազգութեան բոլորներին հետ եւ, վերջապէս, եթէ հրաժարուէք մեր պահանջները կատարելու, - այն ժամանակ իմացած լինէք որ մենք չարաչար կերպով վերջ տալու կը լինինք այդ ամենի համար :

Կամ խեղաթիւրուած լինելով, մի անգամ ընդ միշտ վերջ տալու համար այդ կարգի անձանց յաւակնոտ թափերուն, աւելորդ չեմ սեպեր, առ տեղեւոյս, յիշել թէ, ես երբէք վարդապետ «անարդող», վասակը՝ անկէ վեր «բարձրացող» եւ եղիշէն «վատ» կոչող չեմ եղած. այլ ի միջի այլոց՝ մասնաւորապէս հայրերին եւ պատմութեան վկայիս կը խորհեմ մշակ մը ըլլալով, եւ անձնական համոզումներուս հետ նաեւ աչքիս առջեւ ունենալով՝ անաչառ փարպիցին, Ստեփանոս պատմութեան, ոսկեգործի եղիշէն, պատմագէտ Գարագաշեանի քննակ. պատմութիւնը, Օրմանեանի եւ Դուրեանի վարդապետաց պատմութեան մասին ըրած գրաւոր եւ ռաբ տեսութիւնները, Չոպանեանի Նոր կեանքի 5րդ. թիւին մէջ գրած լուրջ բանասիրականը, ըսած եմ եւ միշտ կը կրկնեմ թէ վարդապետ մեր պատմական փառաց պատկն է եւ միշտ միեւնոյն բարձրութեան մէջ է. իսկ վայրով վատակի, նորէն կը հաստատուի թէ՛ աշտուղ եւ կողմնակալ եղիշէի կարծածին չափ վատ մարդ չէ այն, այլ ճշմարտութեան փարպիցիի եւ կորիւնի հետադարձ տողերով ներկայացուցած անձն է. «Երբեք ժամանակի (Մարտիկ) քարոզութեան ատեն» հասանէր ի դուրս իշխանութեան Սիւնեաց քաջն, Սիւնեանի վասակ, այդ խորհրդական եւ հանձնարելու եւ յաւակնոտ շնորհատուր իմաստութեամբ Աստուծոյ եւայն, եւն. (25 էլ կորիւնի. տպ. ի վեհաօրինակ Ս. Ղազար, 1896), մինչդեռ եղիշէ անկողն զրպարտութիւններով կը նկարագրէ այս եւ ուրիշ պարագաներ : Արդէն եղիշեայ եւ փարպիցեայ բաղդատական քննադատութիւնը պատրաստելու վրայ ըլլալով, առ այժմ այսչափով կը գոհանամ, հաստատելով թէ ես նախ «վարդապետ» եւ ասոր «վատակապետ» եւն. Հակոբակոյրդներու վերջ յիշած գիրքերս կարգաւէ վերջը՝ կարող են իրենց փաստացի դիտողութիւնը ընել հրապարակաւ :

«Աչքի առաջ ունեցէք, որ այն քաջերը, որոնք զեկավարուած են ազգային շարժման գործը եւ կազմում են առ ժամանակեայ կառավարութիւնը, ոչ ոքից եւ ոչ մի բանից երկիւղ չունեն, - նորա վճռել են առանց յետ նայելու դիմել իրենց նպատակին : Բուրժուարայի պանծալի քաջերի համար սարսափելի չեն ո՛չ տանջանքները, ո՛չ մահ կախաղանի վերայ եւ ո՛չ աքսորը զէպի հետաւոր Դիարբէքի : Նոյնպէս ամէն մէկը մի անգամ ընդ միշտ ընտրել է իւր ճանապարհը եւ աներկիւղ գնալու է այդ ճանապարհով. իսկ ազգային յանձնաժողովը եւ ատժամանակեայ կառավարութիւնը աշխատում են հետաքննել ամեն մի վտանգ ու չարիք եւ վարձատրել ամեն մի բարիք : Նոյն ճակատների վերայ զրօշուած են «կամ լուսաճաճանչ ազատութիւն» եւ «կամ մահ թաղի պէն» խօսքերը :

«Վճռեցէ՛ք ուրիշ եւ չուտով յայտնեցէ՛ք - մեր կողմն էք թէ մեր հակառակ կողմը... Հազարաւոր քաջեր անհամբերութեամբ սպասում են ձեր պատասխանին» : Աւելորդ չենք հասարակ յայտնել որ այդ կոչումները հեղինակներն են - նոյն ինքն ինքն ինքին եւ նորա աշակից ընկերը՝ Սեդէկ Կէնչեօլ :

ԼՐԱՔԱՂ

Մեր մէկ թղթակիցը կը գրէ մեզի.

Ս. Իգմիրեանի օրով Պատրիարքարանի քարտուղար Տիրան Քէլէկեան, որ Օսմ. պահպանի ցոյցէն ետքը Եւրոպա եկած, Հայի. դատը ջատագովող հրատարակութիւններ ըրած անգլիական թերթերու մէջ եւ ապա Կ. Պօլիս վերադարձած էր Սուլթանի անձնական գանձին նախարարութեան մէջ պաշտօն ստանձնելու համար, վերջերս Վիեննայի ճամբով Ժէնէվ այցելելու ետքը Բարիդ հասաւ, ուրիշ Լօնտոն եւ Մանչեսթը ալ պիտի երթայ : Տիրան Քէլէկեան Անգլիոյ Ժէնէվ տունի բաշայի գաղտնի հրահանգներով Եւրոպա եկած է, բանակցելու համար հայ յեղափոխականներու եւ հայրենասերներու հետ : Բանակցութեան նպատակը յայտնի է. դադարեցնել յեղափոխական գործունէութիւնը եւ հակաթուրք հրատարակութիւնները. ուրիշ խօսքով՝ հաշտութիւն գոյացնել հայերուն եւ թուրքոյ միջեւ :

Դավրէժէն կիմացնեն թէ խոյարակ 100 հայ տուններ ճնշման ներքեւ մահմէտականութիւնը ընդունեն են : Շէյխ Ուլ զիրինք կանչելով յայտարարել է որ եթէ մահմտականութիւնը չընդունին, գիրենք զլիստեղ պիտի սայ :

Պարսկաստանի 100ի չափ ազգաազգայականներ որոնք Դավրէժի շրջակայ հայաբնակ գիւղերը ցրուած էին եւ սակայն հոն ապրուստի միջոցներէ դուրս մնալով, շարունակ քաղաք կը դիմէին տեղացի ազգայիններէ նպաստ խնդրելու, կառավարական հրամանի մը համաձայն Դավրէժի Լիւթալ թաղի բարեգործական ընկերութեան խնամքով եւ նպաստով զրկուել են Սուլթան, որպէս զի ջանան այս քաղաքին մէջ իրենց գործ եւ ապրուստ ձարել :

Կ. Պօլսոյ իստոյ ժողովը որոշել է դարձեալ միջոցներ ձեռք առնել գաղթականներու վերադարձը զիւրացնելու :

Գերմանիոյ համալսարաններուն մէջ կը գտնուին 41 հայ ուսանողներ, որոնց 26ը Պէտլինի, 3ը Հայէի, 1ը Սթրասպուրի, 1ը Մարպուրի, 3ը Տարնիմատի եւ 7ը Լէյքցիկի մէջ :

Հանդիս Անտաքիոյ մէջ կը կարգանք թէ Անտաքիոյ Պօղոս ասպետ լեհանայր, ուսուցչապետ գեղարուեստից պատմութեան Լէմպէրկի համալսարանին մէջ, իր «Հայերը» վերնագրով մէկ յօդուածով բաւական ամփոփ գաղափար մը առած է Լեհաստանի հայ գաղթականութեան անցեալ եւ արդի վիճակին վրայ : Թողուածը հրատարակուած է «Տի Էօսթէրբէյնի» - Ունկարիշ Մօնարիսի ին վօթ ունտ պիլտ» անուն հոյակապ գործին կալիցիոյ վերաբերեալ մասին մէջ :

Նոյն հանգէսը կը գրէ.

«Տօքթ. Սիմոն Վէպեր որ վերջերս սկսած է յատկապէս Եղիշեայ ոսկեղինիկ գրքովը զբաղիլ, Տի Բաքովի թերթին մէջ ընդարձակ յօդուած մ'ալ հրատարակեց «Գիրատոնէական ճշմարտութեան ջատագովութիւնը հին Հայոց քով» վերնագրով : Այս յօդուածին մէջ հայադէտը կը տարբարուծէ ի մասնաւորի Եղիշեայ Աստուծոյ գոյութեան, չարի սկզբան, աղատութեան եւ հոգեւոր անմահութեան, նիւթոյն արարած ըլլալուն, արարագործութեան, Աստուծոյ միութեան, եկեղեցական աւանդութեան եւն. վրայ ունեցած քրիստոնէական վարդապետութիւնը : Ուրախալ է որ վերջին ժամանակներս օտարազգի հայադէտներու թիւը երկտասարդ, թարմ եւ կարող ուժերով կը ստուարանայ :»

Դատական նախարարութիւնը զեկուցել է պաշտօնագրով մը թէ Չատկական ծախքերու տոթիւ մայիսէն 50 հազար զ. պիտի տրուի Կ. Պօլսոյ Պատրիարքարանին :

Սուլթանը Ա. կարգի Շէֆապիթի պատուանշանը չնորհել է կայս. գանձին նախարար Սաքըղ Յուլիանէս էֆէնտիի տիկնոջ, եւ Բ. կարգի Շէֆապիթ՝ անոր աղջկան :

Կ. Պօլսոյ աստիկանութիւնը իմացուցել է Պատրիարքարանին թէ Պուլկարիպէ վերադարձող գաղթականները, հակառակ եղած ազգարարութեան, առանց անցագրի կուգան եւ եթէ այսպէս շարունակեն, պիտի մերժուին ասպէս ետքը : Պատրիարքարանը ինչ որ հարկ էր, գրել է Պուլկարիպէ թագ. խորհուրդներուն :

Սուլթանի ներման արժանանալով Ադրիանուպօլսէ վերադարձած ազգայինները Մայր Եկեղեցոյ մէջ իրենց հաւատարմական ուխտը ընելէ ետքը, ազատ թողուել են :

Դ. կարգի Շէֆապիթ չնորհուել է Օր. Սուրբիկ Ոսկեմատին, որ մանկաբարձ է եւ Լօնտոնայի հիւանդանոցի մը ներքին բժիշկը : Հայազգի օրիորդը մասնակցած ըլլալով Մայրեայ իշխանուհիին վրայ կատարուած բժշկական յաշող գործողութեան մը, Սուլթանը ուզել է իր գոհունակութիւնը յայտնել, այս պատուանշանը ինչպէս ուրիշ ընծաներ տալով զրիորդին :

«ՓԱՐՈՍ»Ի ԴՍԴԱՐՈՒՄԸ

Այս երկշաբաթիւնը իր առաջին տարեշրջանը բոլորելէ ետքը կը դադարի, բաւականաչափ ընդունելութիւն գտած չըլլալով ընթերցող հասարակութենէն :

Բայց չը կարծէք որ բարոյական քաջաբնութիւնն է որ զգացուած է իրեն. ընդհակառակը, Փարոս, ինչպէս խմբագրութիւնը կը յայտարարէ, հրատարակուած օրէն մինչեւ դադրած օրը, ինքզինք համակրութեամբ չըլլալու ուսած տեսեր է, այն ալ եզրագրութիւնը գաղափարներ համակրութեամբ : Բայց, ինչ որ սովորական երեւոյթ մըն է մեր մէջ, համակրութիւնը լոկ պատոնական եղել է եւ հետեւապէս չէ կրցած առջեւ առնել այն գրամական տաղանային որուն զոհ կերթայ թերթը :

Թարմ ու անհերքելի ապացոյց մըն ալ անա՛ թէ այն զարգացումը, որուն խօսքը կընենք մեր մէջ, թերի կողմեր շատ ունի տակաւին ու զուրկ է իր էական պայմաններէն մէկէն, որ պարտաճանաչութիւն կը կոչուի :

Այս կերպով միայն կրնանք բացատրել այն մեծ հակասութիւնը որ կայ ու եւ է ձեռնարկի մը մեր մէջ համակրութեամբ չըլլալու ունենալու եւ նիւթական չի քաջաբնութիւնը մէջ :

Մինչեւ այն օրը ուր հայ ժողովուրդը ըմբռնէ թէ քաջաբնական խօսքը եւ համակրութիւնը համահաւասար նըշանակութիւն ունենալու են նիւթական օգնութեան, Փարոսի նման օգտակար շատ ձեռնարկներ տակաւին պիտի փրճանան :

Անկեղծօրէն կը ցաւալցինք թերթին խմբագրութեան եւ սրտանց կը մտղթենք որ յաջողի այն ջանքերուն մէջ, զորս պիտի ընէ թերթին վերահրատարակութեան համար, ինչպէս կը յայտարարէ :

«ԻՐԱՒՈՒՆՔ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Տ. ի Մ. (Գերմանիա) . «Վարդ»ին առթիւ ձեր համակրական խօսքերուն Աշոտ Աշոտեանի շնորհակալութիւնները :

